ւորը իր արժանի պատիժն էր ստանում: Բայց հիմա գողը մնում է իր համար ազատ, եւ բոլորովին անմեղ մարդկանց տանում են, դնում ծակը, եւ այն էլ գիտէ՞ք ինչի համար, որ փող առնեն, յետոյ բաց թողն են: Դատաւորը երկու կողմից եւս շահւում է, նախ, գողի հետ ընկեր լինելով, բաժանում է նրա հետ կողոպուտը եւ նրան չի դիպչում, երկրորդ, անմեղ մարդկանց չարչարում է՝ նրանց կողոպտելու համար: Այստեղ արդարութիւ՞ն կայ: Երկրի համարեա բոլոր կառավարիչները ամէն գործերի մէջ այդպէս են վարւում:

Նա կրկին լցրեց իր ծխաքարշը, սկսեց ծխել: Կարծես, դառն ծխի հետ աշխատում էր նա թափել իր սրտի մաղձը:

— Լաւ էր առաջ, — շարունակեց նա, — շատ լաւ՛... Մեր անասունները ազատ-համարձակ մեր սարերի վրայ արածում էին. մեր վրանները, որտեղ ցանկանում էինք, այնտեղ էինք կազմում: Երկիրը դէպի ամէն կողմ բաց էր մեր առջեւ: Հիմա ամէն տեղի վրայ սահման դրոեցաւ. այստեղը, ասում են թագաւորական է, այնտեղը, չգիտեմ ումն է պատկանում, եւ բոլորից վատթարն այն է, որ ամէն բանի վրայ հարկ է դրոել. մի ամսական փոքրիկ գառն անգամ, աստծոյ խոտը արածելու համար, պէտք է հարկ վճարէ: Ո՞վ է տեսել մի այդպիսի բան:

Նա նայեց իր շուրջը, տեսնելու՝ արդեօք ուշադրութեամբ լսում են իրան, թէ ոչ: Այդ միջոցին նա ինձ ներկայանում էր որպէս մի քարոզիչ, որը ե՛ւ խօսում էր, ե՛ւ դիտում էր իր ունկնդիրների դէմքի արտայայտութիւնները, թէ ի՞նչ ազդեցութիւն է գործում նրանց վրայ իր քարոզը:

— Ամէն ինչ, որ լաւ էր, բարի էր, խլեցին մեզանից, — առաջ տարաւ նա, — փոխարէնը տոեցին զեխութիւն, շռայլութիւն, անբարոյականութիւն միայն: Մենք ապրում էինք մեր նախահարց պարզ կեանքով, կերակրւում էինք մեր անասունների իւղով ու պանրով, խմում էինք մեր լեռների մաքուր ջուրը: Մեզ սովորացրին փլաւ ուտել, շերբեթ ու ղահոէ խմել, եւ որ աւելի չարն է՝ արաղ խմել: Մեր կանայք մեր անասունների բուրդից իրանց ձեռքով էին պատրաստում մեր հագուստը. թէ՛ ազնականի կինը եւ թէ՛ գռեհկի կինը երբեք չէին խորշում թելից ու ասեղից. իլիկն ու ջահրեն երկուսի ձեռքում եւս ամբողջ օրը պտտւում էր: Հիմա մեր կանայք օսմանցու յարեմի ծոյլ եւ փափուկ խաթուններ են դարձել, իսկ մեզ սովորեցրին մետաքս հագնել, կարմիր մահուդ հագնել, ոսկի թելերով զարդարել մեր հագուստը: Մեր կանայք այժմ սովորել են իրանց երեսները ներկել զանազան դեղերով, սովորել են աստծոյ շնորհած գեղեցկութիւնը կեղծել, խարդախել: Մեր տղամարդիկ չեն ամաչում կանանց նման իրանց մազերին գոյն տալ հինայով եւ իրանց աչքերը սեւացնել սուրմայով: Երբ որ զուգած, զարդարուած մի երիտասարդ